

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ» ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ա. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի «Սահմանադրական դատարանի տեղեկագրում» (այսուհետ նաև՝ Տեղեկագիր) տպագրության ներկայացվող գիտական հոդվածների կազմման և ձևավորման հիմնական պահանջներն ու չափանիշները, ինչպես նաև դրանց հրապարակման պայմանները:

Բ. Տեղեկագրում հրապարակման ենթակա են միայն սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանող գիտական հոդվածները:

Գ. Գիտական հոդվածը՝ սույն կարգով առաջադրված պահանջներին և չափանիշներին չհամապատասխանելու դեպքում ենթակա է վերադարձման հեղինակին:

Դ. Հրապարակման կարող են ներկայացվել բացառապես այն գիտական հոդվածները, որոնք նախկինում երբևէ չեն տպագրվել:

Ե. Գիտական հոդվածը տպագրության ներկայացվում է իրավագիտության ոլորտում գիտական աստիճան ունեցող անձի դրական կարծիքի/գրախոսության առկայության դեպքում:

2. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ա. Հոդվածները ներկայացվում են հայոց լեզվով՝ հինգից տասներկու էջի սահմաններում, պատրաստվում է MS Word տեքստային խմբագրիչով:

Բ. Հոդվածին առաջադրվում են ներքոգրյալ տեխնիկական պահանջները.

- թղթի ձևաչափը՝ A4
- տառատեսակը՝ հայերեն GHEA Grapalat, անգլերեն և ռուսերեն՝ Sylfaen,
- տառաչափը՝ 12,
- միջտողային հեռավորությունը՝ 1,15,

- սահմանները՝ վերևից և ներքևից՝ 2 սմ, աջից՝ 1,5, ձախից՝ 3,
- էջադրումը՝ էջի ներքևում, կողմնորոշումը՝ կենտրոն:

Գ. Հոդվածի սկզբնամասում նշվում է հեղինակ(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը ամբողջությամբ (գլխատառերով, մզեցված): Նշվում է հեղինակից յուրաքանչյուրի աշխատավայրի՝ ամբողջական անվանումը, հեղինակ(ներ)ի զբաղեցրած պաշտոնը, գիտական աստիճանը և (կամ) կոչումը:

Դ. Մեկ միջտողային տարածություն ներքևում նշվում է հոդվածի վերնագիրը (գլխատառերով, մզեցված), ապա ամփոփագիրը՝ բաղկացած առավելագույնը 700 նիշից այդ թվում՝ բացակները, որը պարունակում է հետազոտության առարկայի, նպատակի և հիմնական դրույթների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Ամփոփագրին հաջորդում են հիմնաբառերը՝ մինչև 7 բառ կամ բառակապակցություն:

Ե. Ամփոփագրին և հիմնաբառերին երկու միջտողային տարածություն ներքևում հաջորդում է հոդվածի բնագիրը՝ ներկայացված սույն կարգի 2-րդ կետի բ/ ենթակետի պահանջների պահպանմամբ: Հոդվածի տեքստում տողադարձեր չեն արվում:

Զ. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) ներկայացվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 10 տառաչափով:

Է. Հոդվածի բնագրին հաջորդում է օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկը՝ նորմատիվ իրավական ակտերի ընդունման, ուժի մեջ մտնելու ամսաթվերի, սկզբնաղբյուրի մատնանշմամբ, ըստ իրավաբանական ուժի, ապա ներկայացվում են հայոց լեզվով, ապա ռուսերենով, անգլերենով կամ այլ օտար լեզվով ուսումնասիրված աշխատությունները՝ նշելով հեղինակի (հեղինակների) ազգանունը (ազգանունները) և անվան և հայրանվան սկզբնատառերը, աշխատության լրիվ անվանումը, հրատարակման վայրը, տարեթիվը, հրատարակչությունը, գիտական հոդվածի դեպքում՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը (ազգանունները) և անվան և հայրանվան սկզբնատառերը, հոդվածի լրիվ անվանումը, ժողովածուի անվանումը, թողարկման համարը, տարեթիվը, համապատասխան էջերի ընդհանուր քանակը:

Ը. Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկին հաջորդում են հոդվածի ռուսերենով, ապա անգլերենով վերնագիրը և ամփոփագրերը, ապա նաև հիմնաբառերը՝ սույն կետի դ/ ենթակետի պահանջների պահպանմամբ: